



«ՈՒԽՏՍ ՂԻՔ ԵՒ ԿԱՏԱՐԵՑԷՔ»

(Ողբույնի խոսք, ասված Ս. Իջման սեղանից, Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնի առթիվ, շաբաթ, 26 սեպտեմբերի 1953 թ.):

Ս ի ր ե լ ի՛ հ ա վ ա տ ա ց յ ա լ ժ ո ղ ո Վ տ լ ր դ .

Սաղմոսերգուն, Իսրայելի մեկ տառապալից ժամանակաշրջանին, իր խոսքն ուղղելով ժողովրդի հավատավոր զավակներուն, րասած է. «Ուխտս զի՛ք և վատարեցէ՛ք»: Իսրայելի ժողովուրդը պետք է ուխտեր, որ ինք հավատարիմ էր աստվածային պատգամներուն և Աստուծո առաջնորդող ճանապարհին: Ան հոգեռանդն ուխտելու էր ծառայել իր Հայրենիքին և հավատարիմ մնալ իր ազգային սրբությունց: Եվ Իսրայել շասանեցավ դարերու ուժգին փոթորիկներեն, որովհետև ճշմարիտ ուխտյալներու փաղանգ մը ունեցավ, որ զինք առաջնորդեց իրավ հավերժություն:

Մեր նախնիք հուրի ու սուրի մեջեն անցան իրենց Հայրենիքն ու Եկեղեցին պահպանելու համար: Մեր սուրբերն ու մարտիրոսները, քաջամարտիկ հերոսներն ու եռամեծ վարդապետները շարունակ գործեցին և փ զին իրենց կյանքին պաշտպանեցին հայ կրոնքն ու Հայրենիքը, ազգային ավանդություններն ու ստեղծագործությունները: Ի՞նչ քարքարոս հորդաներու ականատես եղեր է այս Սուրբ Կաթողիկեն, հայ հավատքին պատվանդանը, հայտնության Սրբություն Սրբոցը՝

Ս. Էջմիածինը: Որպիսի՞ անզգամ ձեռքեր հանդգներ են խորտակել զայն, բայց պարտավեր են ու Կոթողիկեն հաղթապանծ կոթողացեր է Արարատյան աշխարհի կապույտ եթերին մեջ: Ուխտյալներ, Հայաստանյայց Եկեղեցվո և Ազգի զույգ խորաններուն սպասարկող, փրենց խոր հավատքով, աննվաճ կամքով, նվիրումի և ծառայության տեսականով գոտեպնդված, պաշտպանեցին իրենց Մայրենի Ս. Եկեղեցին և Մայր Հայրենիքը: Այսօր արտասահմանի և Հայաստանի հայտնությունը իր գոյությունը անվիճելիորեն կպարտի հավատավոր այն հոգիներուն, ըլլան անոնք աշխարհական վրամ Եկեղեցական, որոնք ամեն նեղություն ու շարշարանք հանձն առած, ուխտեցին ծառայել իրենց Եկեղեցվույն, Ազգին և Հայրենիքին, սրտեռանդն պաշտպանել զանոնք և նույնիսկ մեռնիլ անոնց հավերժ պահպանման և անսասանության համար: Ու կատարեցին իրենց ուխտը...:

Այդպիսի ուխտյալներեն, եռամեծ վարդապետներեն, հավատավոր հոգիներեն հանդիսացավ Նորին Ս. Օծուխուն Վեհափառ Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոս Ամենայն Հայոց: Հոս եկած ենք այսօր, այս հոծ քաղմության հետ, Ս. Իջման սեղանի առաջ, մեր երանաշնորհ հայրապետներու հոգիներուն հետ,

որոնք ներկա են այս վեհաժողովին ներս, տոնախմբելու անվանակոչությունը հանուր ազգեն սիրված ու պաշտանքի արժանի ծերունազարդ Հայրապետին: Գեորգ Զ. Կաթողիկոսի կյանքը եղած է համակ նվիրում հայ ժողովուրդի, Հայաստանյայց Ս. Եկեղեցվո և Մայր Հայրենիքի պայծառության, հարատևության և անսասանության: Ան հանդիսացավ միության ջատագովը և իրագործողը Հայաստանյայց Եկեղեցվո նվիրապետական բոլոր Աթոռներուն: Հայ ժողովուրդն ամենուրեք, արտասահմանի և Սովետական Միության մեջ, կաթողին սիրով և խոր պատկառանքով կապված է նորին Ս. Օծուխյան փրբե հեռատես և քաջարթուն հովիտապետի, անխոնջ ու ժիր մշակի Հայոց Եկեղեցվո: և իր աչքերը սեևած են Իրեն՝ Իրմով առաջնորդվելու համար:

Այս սրբազան պահուն, կանգնած Իջման սեղանի առաջ, հոս, ուր իջեր է Դեբը՝ Աստվածորդին լուսեղեն կերպավորմամբ, մեր հոգիներու խորեն սրտագլխս կմաղթենք, որ մեր նախահայրերուն Աստվածը երկար կյանք շնորհե մեր աստվածարյալ Հայրապետին որ ապրի, կյանք, որ մեզ ապրեցնե, և դարձյալ կյանք, որ պեսգի Իրմով այս Ս. Աթոռը և Հայոց Եկեղեցին գոյատևեն: Եվ այս մաղթանքը, Վեհափա՛ն Տեր, վստահեղք, որ համայն հայութեան ազոթքն է ուղղված առ Աստված:

Ուստի հանուն մեր սուրբերոն, հերոսներուն, վարդապետներուն և մարտիրոսներուն, հանուն Լուսավորիչ Հոր, որ աստվածային լույսը տարածեց Հայոց աշխարհին մեջ, հանուն սրբոց թարգմանչաց փառանքին, որոնք Սրբազան Մատյանին շունչը ծավալեցին հայ հոգիներուն մեջ, հանուն Շնորհալինբոու խումբին, որոնք մեր Ս. Եկեղեցին աստվածային նրբով զարդարեցին, հանուն Տաթևացիներու և անոնց հետևող եռամեծ վար-

դապետներուն, որոնք մեր Եկեղեցին պաշտպանեցին մարդորս թշնամիներեն, և հանուն էջմիածնական և արմաշական այն ընտիր և մեծ մշակներուն, որոնք մեր օրերուն հայ ժողովուրդի և Հայաստանյայց Եկեղեցվո փառքը հանդիսացան, ու վերջապես հանուն այն հայրենասեր ու հավատավոր հոգիներուն, որոնք բոլոր ժամանակներու մեջ իրենց կյանքը զոհեցին մեր սուրբ կրոնին, մեր Հայրենիքին ու ժողովուրդին համար, կուխտե՛նք, Վեհափա՛ն Տեր, հետևիլ Ձեր շավղին և զՁեզ ունենալ որպես առաջնորդ մեր կյանքի: Այո՛, կուխտե՛նք և պիտի կատարենք մեր ուխտը: Ու կհավատանք, որ այս պահուն տ՛չ թե Ձեր անվանակոչության տոնը պիտի հրճվեցնե Ձեր հոգին, այլ այս սրբազան ուխտը:

Բայց ջերմագին պիտի ուզեինք, որ այդ ուխտը մասնավորաբար ընեին Ս. էջմիածնի Հոգևոր Ճեմարանի սաները և այն բոլոր սաները մեր բոլոր դպրեվանքերուն և կրթական հաստատություններուն, որոնք կոչված են ժառանգելու իրենց նախնիքներուն սրբազան հրիտակը. և ոչ սոսկ նկրտեին ժառանգելու զայն, այլ փոխանցելու իրենց հաջորդներուն. այս է ճեմարիտ միջոցը հավերժացնելու մեր ազգային ու կրոնական ինքնուրույնությունը: Այս ուխտով ու անոր կատարումով պիտի խայտան հոգիները բոլոր անոնց, որոնք մոտ տասնյոթը դարեր սպրբեր ու գործեր են այս նվիրական հաստատության՝ հավերժական Ս. էջմիածնի մեջ. և այս ուխտով, որպես Հայր և Առաջնորդ Ազգին, պիտի հրճվի Ձեր հոգին անսելի հրճվանքով:

Թող հավերժաբնակ մեր սուրբերուն Աստվածը Ձեր անվանակոչության տոնին առթիվ Ձերդ Ս. Օծուխյան, Ազգիս Սրբազնագուրջն Հայրապետիդ շնորհե հոգեկան այդ երանական հրճվանքը:

